

Տնօրեն /

Հաստատում եմ՝

Պ.Սանթրոսյան

« 06 » __ 05 __ 2022թ.

**ՔՈԼԵԶԻ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՋԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎՈՒՄ**

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Նշանակությունը և կիրառման ոլորտը

Սույն ընթացակարգը հաստատում է Քոլեջի շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման մեթոդների և մեխանիզմների նկատմամբ ընդհանուր պահանջները, և նկարագրում հաշվետվողականության ապահովման փուլերը:

2. Նկարագրություն

2.1. Ընդհանուր դրույթներ

Սույն հաշվետվողականությունը ապահովում է գործունեության վերաբերյալ հաշվետվության ներկայացում Քոլեջի ներքին (ուսումնառողներ, պրոֆեսորադասախոսական կազմ) և արտաքին (պետական մարմիններ, գործատուներ, շրջանավարտներ, հասարակություն) շահակիցների առջև:

Հաշվետվողականությունը կարող է ներառել ինֆորմացիա և տվյալներ՝

- Քոլեջի հասարակական դերի վերաբերյալ,
- Քոլեջի գործունեության արդյունքների վերաբերյալ,
- Քոլեջի զարգացման պլանների և ձեռքբերումների վերաբերյալ,
- Ուսանողների, շրջանավարտների, պրոֆեսորադասախոսական կազմի ձեռքբերումների վերաբերյալ,

Կրթական ծրագրերի, որակավորումների, գնահատման ընթացակարգերի և այլնի վերաբերյալ:

Քոլեջի արտաքին շահակիցներն են՝

- Դիմորդները և նրանց ծնողները,
- Աշխատաշուկայի ներկայացուցիչները (գործատուները),
- Համագործակցող համալսարանները և կազմակերպությունները,
- Պետական կառավարման մարմինները,

Քոլեջի ներքին շահակիցներն են՝

- Ուսումնառողները,
- Պրոֆեսորադասախոսական կազմը,
- Վարչական աշխատակիցները, ուսումնօժանդակ կազմը և այլն.

2.2 Նպատակ

Ընթացակարգի նպատակն է Քոլեջի բոլոր շահակիցների առջև ապահովել Քոլեջի առանձին ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ հաշվետվողականություն:

2.3 Ներքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովում
Ներքին շահակիցների առջև հաշվետվություն ներկայացնում են՝

- Տնօրենը՝ տարեկան պլանի հաշվետվության և վերլուծության ձևով:
- Մանկավարժական խորհուրդը, հաշվետվողականության ձևը՝ խորհուրդների նիստերի արձանագրություններ:
- Ամբիոնների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների տարեկան հաշվետվողականությունը:

Ներքին հաշվետվողականության ապահովման մեթոդներն են՝

- Կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների կողմից արձանագրությունների բովանդակության ներկայացումը աշխատակիցներին:
- Քոլեջի գործունեության արդյունքների ներկայացումը մանկավարժական խորհրդում, կառավարման խորհրդում:
- Հաշվետվողականության ապահովումը քոլեջի պաշտոնական կայքի և տեղեկատվական այլ գործիքների միջոցով:

2.4 Արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովում

Արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովումը քոլեջին թույլ է տալիս գնահատել իր գործունեության արդյունքները հետադարձ կապի մեխազմների և գործիքների միջոցով:

Արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման համար անհրաժեշտ է՝

- ընտրել հաշվետվության ինֆորմացիայի բովանդակությունը և հաշվետվողականության ձևը,

- ընտրել հաշվետվողականության արդյունքում հետադարձ կապի մեխանիզմները:

Արտաքին հաշվետվողականության ապահովման մեթոդներն են՝

- Կառավարման խորհրդի որոշումների ներկայացում քոլեջի պաշտոնական կայքում կամ տեղեկատվական այլ միջոցներում:
- Քոլեջի գործունեության արդյունքների ներկայացում :
- Քոլեջի ընթացիկ իրադարձությունների վերաբերյալ ինֆորմացիա քոլեջի ֆեյսբուքյան էջերում:
- Ֆինանսական հաշվետվողականության ապահովումը քոլեջի ֆեյսբուքյան էջում:

2.5 Հաշվետվողականության ապահովման գործիքներ

- Քոլեջի պաշտոնական կայքը ,ֆեյսբուքյան էջերը , յուրության ալիքը:
- Հաշվետվողական ելույթները ԶԼՄ-երի միջոցով:
- Մանկավարժական խորհրդի և այլ նիստերի արձանագրությունները:
- Քոլեջի գործունեության տարեկան հաշվետվություն:

2.6 Հաշվետվողականության գնահատում

Հաշվետվությունների գնահատման պարամետրներն են ներկայացվող ինֆորմացիայի օբյեկտիվությունը, արդիականությունը:

3.Պատասխանատվություն և իրավասություններ

Քոլեջը պատասխանատվություն է կրում քոլեջի գործունեության վերաբերյալ հաշվետվողականության ապահովման համար: